



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. օգոստոսին /վերլուծություն/

2011թ. օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 15653 գործարքներ, որոնց քանակը 2011թ. հուլիսի համեմատ աճել է 12.1%-ով, իսկ 2010թ. օգոստոսի համեմատ՝ 4.6%-ով:

2011թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4382 օտարման գործարքների 72.9%-ը կազմել են առուվաճառքները, 26.3%-ը՝ նվիրատվությունները և 0.8%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.3%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 42.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2011թ. օգոստոսին, 2011թ. հուլիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 14.4%-ով, իսկ 2010թ. օգոստոսի համեմատ՝ 7.4%-ով:

2011թ. օգոստոսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 68.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. օգոստոսին, 2011թ. հուլիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 18.3%-ով, իսկ 2010թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 2.8%-ով:

2011թ. օգոստոսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	օգոստոս 2010թ.	օգոստոս 2011թ.	հուլիս 2011թ.
Կենտրոն	462800	438200	440200
Արաբկիր	382000	337800	344600
Քանաքեռ-Զեյթուն	290800	262900	262500
Նոր-Նորք	236600	226600	226300
Ավան	242200	247400	240400
Էրեբունի	250200	234300	240000
Ծենգավիթ	253000	223100	223800
Դավթաշեն	274500	258100	260400
Աջափնյակ	234100	221200	224800
Մալաթիա-Սեբաստիա	242500	227400	225700
Նուբարաշեն	147800	145400	146400
Միջինը Երևանում /բազի Նորք-մարաշից/	274200	256600	257700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. օգոստոսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. հուլիսի համեմատ, նվազել են 0.4%-ով:

2011թ. օգոստոսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 401 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. հուլիսի համեմատ, աճել է 29.8%-ով, իսկ 2010թ. օգոստոսի համեմատ՝ 7.8%-ով:

2011թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		օգոստոս 2010թ.	օգոստոս 2011թ.	հուլիս 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	142000	124600	128300
	Ապարան	45200	54400	52400
	Թալին	56000	63200	61200
Արարատ	Արտաշատ	97300	99300	100400
	Մասիս	132700	113200	114900
	Վեդի	97800	94100	95300
	Արարատ	86400	82600	80200
Արմավիր	Վաղարշապատ	164900	137700	141600
	Արմավիր	124800	116300	118500
	Մեծամոր	85800	79800	82300
Գեղարքունիք	Սևան	99500	92100	89700
	Գավառ	47300	52400	53100
	Մարտունի	86200	92700	90400
	Վարդենիս	32400	35800	37200
	Ճամբարակ	19900	24300	23600

Լոռի	Վանաձոր	96200	89900	91300
	Ստեփանավան	59600	72400	70200
	Սպիտակ	83600	93400	90300
	Ալավերդի	33100	35500	34600
	Տաշիր	37000	46100	44600
	Թումանյան	6200	13100	12700
	Շամլուղ	3400	9000	8600
	Ախթալա	14300	21300	20100
Կոտայք	Աբովյան	157800	136600	140100
	Նոր Հաճն	136200	120800	120200
	Բյուրեղավան	110100	103000	106200
	Եղվարդ	113500	109500	106300
	Հրազդան	64200	60300	61100
	Ծաղկաձոր	181500	188000	188100
	Չարենցավան	79700	73600	74100
Շիրակ	Գյումրի	123900	106800	106400
	Արթիկ	62300	65200	66000
	Մարալիկ	30900	35400	34800
Սյունիք	Գորիս	141000	123300	122300
	Կապան	103400	99100	101300
	Սիսիան	80500	89300	92200
	Մեղրի	60900	73300	71100
	Ագարակ	34300	42400	40500
	Քաջարան	61500	71700	69800
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	71800	81800	83400
	Եղեգնաձոր	110500	109800	112300
	Ջերմուկ	118800	118200	120900
Տավուշ	Դիլիջան	111000	107100	108300
	Իջևան	139300	124100	125300
	Բերդ	42200	50300	50300
	Նոյեմբերյան	34000	42300	41100
	Այրում	24100	30100	29300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. հուլիսի համեմատ, նվազել են 0.2%-ով:

2011թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 493 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 128, մարզերում միասին վերցրած՝ 365: 2011թ. օգոստոսին, 2011թ. հուլիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 32.9%-ով, ընդ որում Երևանում՝ 36.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 31.8%-ով: 2010թ. օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 17.4%-ով, ընդ որում Երևանում՝ 29.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 13.7%-ով:

2011թ. օգոստոսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	օգոստոս 2010թ.	օգոստոս 2011թ.	հուլիս 2011թ.
Կենտրոն	486500	453400	459200
Արաբկիր	403200	363300	374100
Քանաքեռ Զեյթուն	297400	269100	272100
Նորք Մարաշ	285600	292100	283200

Ավան	254600	250800	243700
Էրևբունի	261300	240800	245600
Շենգավիթ	266700	235000	235500
Դավթաշեն	287400	272400	274800
Աջափնյակ	250100	234000	236900
Մալաթիա Սեբաստիա	254100	235600	233900
Նուբարաշեն	149900	150100	150100
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	290600	272400	273600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. օգոստոսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. հուլիսի համեմատ նվազել են են 0.4%:

2011թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		օգոստոս 2010թ.	օգոստոս 2011թ.	հուլիս 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	149800	128500	132300
	Ապարան	50800	55900	53900
	Թալին	58500	64400	62400
Արարատ	Արտաշատ	102600	106000	107100
	Մասիս	138400	116800	118600
	Վեդի	102500	96800	98000
	Արարատ	92300	87200	83000
Արմավիր	Վաղարշապատ	172300	158000	160400
	Արմավիր	130700	119000	121500
Գեղարքունիք	Սևան	103100	96000	93500
	Գավառ	51600	54000	54500
	Մարտունի	91200	93500	91400
	Վարդենիս	36100	39500	40500
	Ճամբարակ	23500	27300	26500
Լոռի	Վանաձոր	101800	98500	99200
	Ստեփանավան	64000	75000	72700
	Սպիտակ	86700	102600	97300
	Ալավերդի	36600	37000	35300
	Տաշիր	40200	49800	48100
	Թումանյան	10800	13700	13200
	Շամլուղ	7500	10500	10000
	Ախթալա	18200	22500	21200
Կոտայք	Աթոլյան	173900	144000	147700
	Նոր Հաճն	138700	128400	127800
	Բյուրեղավան	112300	104700	108000
	Եղվարդ	126700	115400	112000
	Հրազդան	69200	64000	64600
	Ծաղկաձոր	318400	309000	309600
	Չարենցավան	84300	75500	76000
Շիրակ	Գյումրի	131200	118000	117300
	Արթիկ	65100	67200	68000
	Մարալիկ	33200	38000	37200

Սյունիք	Գորիս	145800	132000	131000
	Կապան	105800	102000	103300
	Սիսիան	86200	92400	94400
	Մեղրի	63600	74300	72100
	Ագարակ	35800	44100	42100
	Դաստակերտ	10500	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	77300	84000	85100
	Եղեգնաձոր	116400	118000	120400
	Ջերմուկ	123300	121400	124200
Տավուշ	Դիլիջան	115400	110000	110800
	Իջևան	145400	133000	134500
	Բերդ	45000	52600	52600
	Նոյեմբերյան	35900	44900	43600
	Այրում	26000	31800	30100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. հուլիսի համեմատ, աճել են 0.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. օգոստոսին հանրապետությունում օտարվել են 1360 միավոր /643.02 հա/ հողեր, որից Երևանում՝ 85 միավոր /42.58 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 591 միավոր /541.55 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.62 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 558 միավոր /52.78 հա/, որից Երևանում՝ 70 միավոր /5.25 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 167 միավոր /8.58 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /3.00 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 13 միավոր /35.52 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /33.70 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 25 միավոր /3.98 հա/ ,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 6 միավոր /0.61 հա/:

2011թ. օգոստոսին հանրապետությունում օտարված հողերից 1118 միավորի /537.39 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 70 միավոր /41.13 հա/, նվիրատվության գործարքներ՝ 224 միավորի /104.07 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /1.42 հա/ և փոխանակության գործարքներ՝ 18 միավորի /1.56 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.03 հա/:

Հանրապետությունում 2011թ. օգոստոսին, 2010թ. օգոստոսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4.9%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 2.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 3.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 18.2%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 184.55 հա, որից 177.36 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 29.2%-ը կամ 327 գործարքներ /153.28 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 5 գործարք /0.27 հա/, իսկ 69.9%-ը կամ 781 միավորը /383.02 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 64 միավոր /40.80 հա/: 2011թ. օգոստոսին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 10 գործարք /1.09 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2011թ. օգոստոսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված

հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէկոլոգիայի համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	2	0.12	3	0.15	2	0.62	1	33.70	55	4.29	6	2.20
Արագածոտն	3	2.14	0	0.00	1	0.01	2	0.01	63	58.70	0	0.00	32	3.77	2	0.11
Արարատ	5	21.67	1	0.03	31	2.50	5	0.02	49	28.09	0	0.00	34	2.59	6	0.14
Արմավիր	19	83.18	2	0.24	3	0.12	7	0.14	71	94.19	0	0.00	64	6.62	5	0.07
Գեղարքունիք	2	0.26	1	0.03	3	0.45	4	0.07	16	19.86	0	0.00	16	1.98	1	0.003
Լոռի	4	0.86	3	0.75	3	0.17	7	0.04	40	19.75	0	0.00	17	2.35	7	0.18
Կոտայք	10	10.93	3	0.17	83	7.32	35	0.43	94	44.13	0	0.00	80	8.64	30	1.22
Շիրակ	0	0.00	1	0.32	15	0.38	10	0.77	16	22.58	0	0.00	10	0.94	1	0.08
Սյունիք	2	6.70	0	0.00	3	0.50	0	0.00	13	17.15	0	0.00	7	0.53	0	0.00
Վայոց Ձոր	10	8.36	0	0.00	1	0.09	9	0.41	5	2.01	0	0.00	2	0.16	2	0.18
Տավուշ	1	1.00	1	0.29	4	0.39	1	0.002	15	2.48	0	0.00	14	1.44	3	1.01
Ընդամենը	56	135.10	12	1.83	149	12.05	83	2.04	384	309.56	1	33.70	331	33.31	63	5.19

Ստորև ներկայացվում է 2011թ. օգոստոսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէկոլոգիայի համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	3	0.12	0	0.00	1	0.05	2	0.07	2	0.15	0	0.00	0	0.00	1	0.07	1	0.08
Արագածոտն	3	0.02	0	0.00	1	0.01	2	0.01	2	2.12	2	2.12	0	0.00	0	0.00	0	0.00
Արարատ	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	41	24.21	5	21.67	1	0.03	31	2.50	4	0.01
Արմավիր	2	0.03	0	0.00	1	0.02	1	0.01	28	82.47	18	82.00	2	0.24	2	0.10	6	0.13
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	10	0.81	2	0.26	1	0.03	3	0.45	4	0.07
Լոռի	8	0.71	2	0.65	2	0.04	4	0.02	9	1.10	4	0.86	1	0.09	1	0.13	3	0.02
Կոտայք	9	0.51	0	0.00	4	0.39	5	0.12	121	18.10	9	10.70	3	0.17	79	6.92	30	0.31
Շիրակ	3	0.37	0	0.00	1	0.01	2	0.36	23	1.11	0	0.00	1	0.32	14	0.37	8	0.42
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	5	7.20	2	6.70	0	0.00	3	0.50	0	0.00
Վայոց Ձոր	1	0.06	0	0.00	0	0.00	1	0.06	17	4.04	8	3.60	0	0.00	1	0.09	8	0.35
Տավուշ	4	0.132	0	0.00	3	0.13	1	0.002	3	1.55	1	1.00	1	0.29	1	0.26	0	0.00
Ընդամենը	34	1.95	2	0.65	13	0.65	19	0.65	261	142.86	51	128.91	10	1.17	136	11.39	64	1.39

Հանրապետությունում 2011թ. օգոստոսին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 5 գործարք /6.18 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. օգոստոսին, 2010թ. օգոստոսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 33.6%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 75.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ աճել 37.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 21.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 97.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 28.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 3.3 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	1.50	215.8	215.8	215.8	23	8.17	365.0	12000.0	4272.0
Ապարան						12	7.30	86.5	2727.3	665.5
Թալին	1	0.62	160.0	160.0	160.0	2	3.65	93.6	5494.5	554.7
Ծաղկահովիտ						15	36.12	79.5	1000.0	218.3
Արարատի մարզ										
Արտաշատ	1	2.70	73.1	73.1	73.1	5	1.08	335.1	10833.3	2571.2
Մասիս	3	16.97	60.5	260.0	128.0	26	16.48	200.0	11904.8	2942.4
Վեդի	1	2.00	3050.0	3050.0	3050.0	18	10.54	207.0	10795.1	1730.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	9	22.85	35.3	1061.7	361.5	27	18.35	294.3	9090.0	1543.8
Բաղրամյան	7	53.33	67.5	71.0	68.5	8	48.82	90.6	2561.1	747.7
Վաղարշապատ	2	5.82	74.2	74.2	74.2	33	25.36	444.4	11764.7	2935.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						6	2.51	199.8	1875.0	378.9
Ճամբարակ								60.5	953.3	320.0
Մարտունի	1	0.04	605.0	605.0	605.0			51.1	2850.0	705.5
Սևան	1	0.22	1221.0	1221.0	1221.0	1	0.12	52.2	2134.8	305.0
Վարդենիս						9	17.22	41.2	2575.1	360.6
Լոռու մարզ										
Այվերդի						1	0.08	170.4	6424.2	750.3
Գուգարք						22	12.07	234.6	6065.9	815.0
Սպիտակ	2	0.81	484.0	1240.3	862.1	1	0.09	250.0	5555.5	710.5
Ստեփանավան	2	0.05	480.0	496.4	488.2	6	3.20	90.6	1686.6	285.3
Տաշիր						4	0.99	45.3	1384.4	143.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	6	2.88	88.0	466.5	185.1	21	6.35	279.3	11942.7	4794.2
Եղվարդ	3	7.83	67.6	681.8	385.5	52	29.81	174.4	11971.8	3155.5
Հրազդան						17	6.78	130.5	10256.4	2100.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						4	6.42	252.0	1693.1	587.6
Ամասիա						4	6.76	40.9	261.0	132.2
Անի						5	4.26	110.6	546.9	361.9
Աշոցք						1	2.10	58.5	215.8	114.0
Արթիկ						2	3.04	79.4	1428.6	350.0
Սյունիքի մարզ										
Գորիս						4	4.28	92.6	1023.2	662.3
Կապան	2	6.70	450.0	450.0	450.0			120.0	841.6	327.2
Մեղրի						2	0.41	193.0	3000.0	700.0
Սիսիան						7	12.47	46.3	1977.4	455.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	8	3.60	69.5	316.3	125.9	4	0.88	125.0	10000.0	1840.0
Վայք						1	1.13	58.8	1430.7	575.3

Տավուշի մարզ										
Բերդ						9	1.37	213.3	3783.8	640.0
Իջևան	1	1.00	154.0	154.0	154.0			267.5	9454.5	1215.3
Նոյնմբերյան						6	1.11	46.7	7368.4	830.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատնաքննից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						21	23212.0	130.7	22200.0	2572.6
Ապարան						7	9997.0	124.1	609.6	335.6
Թալին						3	2853.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ						1	1610.0	60.0	214.3	85.0
Արարատի մարզ										
Արտաշատ						2	1890.0	173.9	7140.3	894.0
Մասիս	31	24981.0	1253.1	1977.5	1508.9	25	16173.0	187.5	25000.0	1213.1
Վեդի						7	7849.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	966.0	179.6	179.6	179.6	20	24041.0	131.6	9090.9	1215.0
Բաղրամյան								100.0	833.3	227.5
Վաղարշապատ						43	40470.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	1177.0	186.6	1084.3	595.5
Ճամբարակ						4	6479.0	71.3	2286.2	149.3
Մարտունի						8	10865.0	119.3	5000.0	276.8
Սևան	3	4503.7	190.0	503.6	386.6	2	1306.0	240.0	3110.4	290.3
Վարդենիս								72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այվերդի						1	510.0	114.3	1388.9	215.3
Գուգարք						7	8456.0	77.9	14083.3	1000.0
Մայիտակ	1	1285.0	165.6	165.6	165.6	7	12840.0	104.9	1348.3	200.7
Ստեփանավան						1	400.0	88.2	1666.7	175.0
Տաշիր						1	1270.0	45.3	400.0	88.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	9	4744.4	850.8	4976.7	2225.0	53	60015.2	264.5	35353.5	1960.3
Եղվարդ	27	21742.0	1269.0	3234.0	1351.0	20	18260.0	173.6	27000.0	2840.0
Հրազդան	43	42754.0	233.1	244.2	234.1	6	6860.0	117.7	34848.5	1321.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	13	3281.8	1562.5	4673.2	3530.3	6	5799.0	113.6	18750.0	331.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	1	400.0	487.5	487.5	487.5	1	1600.0	67.9	180.6	154.0
Աշոգք								40.8	144.0	61.0
Արթիկ						3	1962.0	111.8	5000.0	216.5

Սյունիքի մարզ										
Գործիս						5	3055.0	112.2	1700.0	369.1
Կապան	3	5029.0	98.5	100.9	100.1	1	1666.0	67.9	2638.9	285.3
Մեղրի						1	600.0	68.5	632.9	182.6
Սիսիան								123.5	875.0	190.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	1580.0	96.7	7659.6	497.5
Վայք	1	915.0	851.5	851.5	851.5			120.7	1448.3	196.5
Տավուշի մարզ										
Բերդ	1	2620.0	219.9	219.9	219.9	1	180.0	75.8	810.0	107.2
Իջևան						11	12826.0	74.1	14423.1	512.0
Նոյնեմբերյան						2	1350.0	125.0	1948.1	214.5

2011թ. օգոստոսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 3 գործարք 0.23 հա մակերեսով, Լոռու մարզում:

2011թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 634 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.1%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 89.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. օգոստոսին, 2011թ. հուլիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 2.0%-ով, իսկ 2010թ. օգոստոսի համեմատ՝ 17.9%-ով:

2011թ. օգոստոսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 39 բնակարանների, 19 անհատական բնակելի տների, 304 հասարակական, 42 արտադրական նշանակության օբյեկտների, 223 միավոր /1057.76 հա/ հողերի և 7 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. օգոստոսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 9 վարձակալության գործարքների /այդ թվում 3 միավոր՝ 11.01 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2011թ. հուլիսի համեմատ աճել է 12.5%-ով, իսկ 2010թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 25.0%-ով: 2011թ. օգոստոսին հանրապետությունում վարձակալված 1057.76 հա հողերից 26.78 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1030.98 հա հողերից 25.75 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 6.99 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 458.99 հա, որից 456.10 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. օգոստոսին հանրապետության մարզերում վարձակալվել են 988.17 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. օգոստոսին հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

Մարզի անվանումը	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00
Արարատ	2	20.30
Արմավիր	14	18.44
Գեղարքունիք	21	456.10
Լոռի	16	448.79
Կոտայք	10	16.62
Շիրակ	4	4.97
Սյունիք	14	20.35
Վայոց Ձոր	6	2.56
Տավուշ	1	0.04
Ընդամենը	88	988.17

2011թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2061 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.2%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. հուլիսի համեմատ, նվազել է 0.7%-ով, իսկ 2010թ. օգոստոսի համեմատ աճել՝ 11.6%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.0%/, առանձնատների /24.5%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.9%/ և հողերի /10.8%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1043 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. հուլիսի համեմատ, աճել է 4.9%-ով, իսկ 2010թ. օգոստոսի համեմատ՝ 19.3%-ով:

2011թ. օգոստոսին հանրապետությունում գրավադրվել են 317.19 հա հողեր, որից 94.33 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 59.9%-ը կամ 190.00 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 121.51 հա, որից 116.83 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2011թ. օգոստոսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 194 գործարքներ, որից 137-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 82.0%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 13.9%-ն՝ անհատական բնակելի տների, 0.5-ական%-ը՝ այգետնակների, արտադրականան նշանակության օբյեկտների և ավտոտնակների, 2.6%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ: 2011թ. հուլիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 3.2%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 5.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 32.6%-ով: 2010թ. օգոստոսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 68.7%-ով, ընդ որում Երևանում՝ 59.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 96.6%-ով:

2011թ. օգոստոսին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2011թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2653 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2011թ. հուլիսի համեմատ աճել է 22.0%-ով, իսկ 2010թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 7.2%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /29.6%/:

33 կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե